Արձանագրություն N 02

«ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՇՁԲ-04/26» ծածկագրով ԳՀ մրցույթի գնումներ կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Գյումրի

21 հունվարի, 2026թ, ժ 16:00,

«Գյումրու համայանքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Վարդանանց հր. 1

Հանձնաժողովի նախագահ՝

1) Հովսեփ Սիմոնյան – համայնքի ղեկավարի խորհրդական,

Հանձնաժողովի անդամներ՝

2) Դմիտրի Մանվելյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

3) Դավիթ Հարությունյան - բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ,

4) Վարդան Զարիֆյան – բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի առաջատար մասնագետ,

5) Հրաչիկ Վարդանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

1. «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՇՁԲ-04/26» ծածկագրով ԳՀ-ի միջոցով մրցույթի առաջարկների բացման վայրի, գնային առաջարկների ներկայացման, գնահատման, արդյունքների հաստատման /մրցույթի արդյունքների ամփոփման/ մասին

1. Ընդունել ի գիտություն, որ՝

1.1 Գնային առաջարկ ներկայացնելու մասին հրավերը 14.01.2026թ. էլեկտրոնային եղանակով տեղադրվել է www.gnumner.am հասցեում:

1.2 «Գյումրու համայանքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի կարիքների համար ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ձեռքբերման համար «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՇՁԲ-04/26» ծածկագրով ԳՀ-ի համաձայն գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Մասնակցի	
Անվանումը	Հասցեն
«Դրախտ Ռեզորտ» ՍՊԸ	ՀՀ, Շիրակի մարզ, Գյումրի, Ջիվանու 72տուն
«ԳՅՈՒՄՐՈՒ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՓԲԸ	ՀՀ, Շիրակի մարզ, Գյումրի, Կարեն Դեմիրճյան 6Ա,

1.4 Տվյալներ հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

- գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը ներկայացրել է գնման ընթացակարգին մասնակցելու դիմում, գնի առաջարկ: Փաթեթում ներկայացված փաստաթղթերի բոլոր էջերը կնքված և ստորագրված են մասնակցի կողմից:

1.5 Մասնակիցների առաջարկած գները

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	«Դրախտ Ռեզորտ» ՍՊԸ		«ԳՅՈՒՄՐՈՒ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՓԲԸ		Նախահաշվային գին
		առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ-ն	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ-ն	ներառյալ ԱԱՀ-ն
1.	ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	950 000	1 140 000	1 000 000	1 000 000	1 156 590

Հանձնաժողովը արձանագրեց՝

- «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՇՁԲ-04/26» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցներ «Դրախտ Ռեզորտ» ՍՊԸ-ի և «ԳՅՈՒՄՐՈՒ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՓԲԸ-ի ներկայացրած գնային առաջարկները Պատվիրատուի մոտ առկա նախահաշվային գնի սահմանում են: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնային առաջարկների համեմատումը կատարվում է առանց ԱԱՀ-ի գնի՝ նվազագույն գնային առաջարկ է ներկայացրել **«Դրախտ Ռեզորտ» ՍՊԸ-ն:**

Հանձնաժողովը որոշեց՝

- «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՇՁԲ-04/26» ծածկագրով գնման ընթացակարգի մասով հաղթող մասնակից ճանաչել «Դրախտ Ռեզորտ» ՍՊԸ-ին:
- Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը: Սույն ընթացակարգի համար «Գնումների մասին» ՀՀ օրենիք 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետը 10 օրացուցային օր է:
- Պայմանագիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակցին կուղարկվի պայմանագրի նախագիծը, ինչն անհրաժեշտ է 5 աշխատանքային օրվա ընթացքում հաստատել և ներկայացնել պատվիրատուին: Անհրաժեշտ է նաև սահմանված կարգով ներկայացնել որակավորման և պայմանագրի ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

Հանձնաժողովի
նախագահ՝ ---------- Հովսեփ Սիմոնյան (ԳՊ/ԳԱՊ)

Անդամներ՝ ---------- Դմիտրի Մանվելյան (ԳՊ/ԳԱ)

---------- Դավիթ Հարությունյան (ԳՊ/ԳԱ)

---------- Վարդան Զարիֆյան (ԳՊ/ԲԱ)

---------- Հրաչիկ Վարդանյան (ԳՊ/ԲԱ)

Քարտուղար՝ ---------- Արմինե Սարգսյան (ԳՊ/ՄՀՄ)